□□□□□□□□□□ □□□□□□□□□□□□□□,□□ □□□□□□□□ □□□□□□□□□□ □□□□□□□□□□□□□□ □ □□□□□□□ □□□□□□□□□□□□□,□□□□□□□ □□□□□□□□□□□ □ □□□□□□□□□ □□□□□□□□ □□□□□□□□□ □□ □□□ □□□□□

Սբ. Ղուկիանոս հարյուրապետի անունը թեև չի նշված Նոր Կտակարանում, բայց ըստ Սրբազան Ավանդության՝ նա այն հարյուրապետն էր, որ ներկա է եղել Հիսուսի խաչելությանը և մահվանը հաջորդած հրաշքներին: Նա հռոմեացի զինվոր էր և ծնունդով Կապադովկիայից: Տիրոջ խաչելության ժամանակ դարձի է եկել՝ հավատալով Փրկչի վարդապետությանը: Ականատես լինելով Հիսուսի հրաշափառ հարության՝ հրաժարվում է սուտ վկայություն տալուց, թե իբր Նրա մարմինը գողացել են աշակերտները: Սբ. Ղուկիանոսը գլխատվել է Պիղատոսի կողմից:

Հովսեփ Աստվածահայրը Դավիթ թագավորի ցեղից էր: Հիսուս Քրիստոսի հայրն է երկրի վրա և Սբ. Մարիամի ամուսինը: Մատթեոս Ավետարանիչը նրան «արդար» մակդիրով է բնութագրում (տես Մատթ. 1:19): Երբ Հովսեփն իմանում է, որ իր նշանածը հղի է, ցանկանում է նրան առանց աղմուկի արձակել: Բայց Տիրոջ հրեշտակը երևում է նրան և պատվիրում, որ չարձակի Մարիամին, քանզի նրա մեջ ծնվածը Սբ. Հոգուց է: Հրեշտակը պատվիրում է նաև, որ իր որդու անունը Հիսուս դնի, քանզի նա պիտի փրկի իր ժողովրդին մեղքերից: Հասկանալով Աստծուց իրեն վստահված առաքելության կարևորությունը՝ նա ավելի ուշադիր է դառնում նշանածի հանդեպ՝ պաշտպանելով և հոգ տանելով նրա մասին: Երբ ծնվեց մանուկ Հիսուսը, օրենքի համաձայն թլփատեց նրան և քառասուն օրականում տաճարին ընծայեց: Իսկ երբ նրան վտանգ սպառնաց, Աստծո հրեշտակի հրամանով նրան Եգիպտոս փախցրեց՝ որոշ ժամանակ անց կրկին վերադառնալով Նազարեթ:Սբ. Հովսեփն առանձնանում է առ Աստված ունեցած աներեր հավատով, որ միշտ անսաց և իր կյանքում աշխատեց իրագործել Աստծո պատվիրանները: Սբ. Հովսեփ Արիմաթացին Հիսուսի ծածուկ աշակերտներից էր՝ հարուստ, պարկեշտ, բարեգործ և արդար մի մարդ, որն Աստծո արքայությանն էր սպասում: Իմանալով, որ Հիսուսն արդեն մահացել է խաչի վրա, համարձակվում է մոտենալ Պիղատոսին՝ թույլտվություն խնդրում Տիրոջ մարմինը թաղելու համար: Նրա գերեզմանը գտնվում է Երուսաղեմի Փրկչական գերեզմանի մոտ, որը պատկանում Երուսաղեմի Հայոց Պատրիարքությանը:

Ղազարոսը, Մարթան և Մարիամն ապրել են Տիրոջ երկրային կյանքի ժամանակ՝ Երուսաղեմից ոչ հեռու գտնվող Բեթանիա գյուղում: Հիսուս առանձնահատուկ է սիրել այս ընտանիքին և Երուսաղեմ այցելելիս հաճախ հյուրընկալվել նրանց տանը: Մեռած Ղազարոսին Քրիստոս հարություն է տվել՝ ուրախացնելով նրա քույրերին: Ավագ քույրը՝

Մարթան, գործունյա և աշխատասեր էր, իսկ Մարիամը՝ Աստծո խոսքին ունկնդիր՝ բարեպաշտ մի հավատացյալ: Եղբոր հարությունից հետո, Մարիամը թանկարժեք յուղով օծել է Քրիստոսի մարմինը: Ըստ ավանդության՝ նրանք մեկնել են Կիպրոս, ուր հետագայում կնքել են իրենց մահկանացուն:

□□□□□ □□□□□□□□□

20.10.2008
19.10.2009
18.10.2010
17.10.2011
22.10.2012
21.10.2013
20.10.2014
19.10.2015
17.10.2016
23.10.2017
22.10.2018
21.10.2019
19.10.2020
18.10.2021
17.10.2022
23.10.2023
21.10.2024
20.10.2025
19.10.2026
18.10.2027
23.10.2028
22.10.2029
21.10.2030